

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն N5

քաղաք Երևան

հինգը նոյեմբերի երկու հազար տասներկու թվականի

ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի նոյեմբերի 5-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց նոտարների որակավորման ստուգման գործնական խնդիրների փուլի արդյունքները:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

- Ա. Օրբեյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
 - Ա. Հովհաննիսյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
 - Դ. Մխեյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ
 - Հ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի օգնական
 - Ա. Աբրահամյան - Կենտրոն նոտարական տարածքի նոտար
- Հանձնաժողովի մյուս 3 անդամները տեղեկացվել են նիստի մասին, բայց նախօրոք ծանուցել էին մասնակցելու անհնարինության մասին և չեն ներկայացել նիստին:
Քվորումն ապահովված էր:
Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Լ. Իսկանդարյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Նոտարների որակավորման ստուգումների երկրորդ փուլի ամփոփում:
2. Աշխատանքների վերջնական ուսումնասիրություն և վերջնական գնահատականների հաստատում:
3. Այլ հարցեր

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Օրակարգի առաջին հարցի հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ ստուգումների երկրորդ փուլին մասնակցել է 41 թեկնածու: Մասնակիցները հանձնել են թեստավորման փուլը մեկ խմբով:

Ա. Օրբեյանը առաջարկեց՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 789-Ն որոշմամբ (վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1463-Ն որոշմամբ) հաստատված կարգի պահանջները, որոշման կից հրապրակել խնդիրների լուծման պայմանական ճիշտ պատասխանների տարբերակը:

Օրակարգի երկրորդ հարցի հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ թեսթերը գրելուց և գրավորների ծածկագրման աշխատանքներից անմիջապես հետո սկսվել է դրանց ստուգումը: Աշխատանքների սգուտումը հանձնաժողովի անդամների կողմից տևել է մինչև նոյեմբերի երեքի ժամը 22:00, ինչին ներկա են եղել հանձնաժողովի բոլոր անդամները, և ուսումնասիրվել են բոլոր աշխատանքները՝ երկու

հոգուց բաղկացած խմբերով: Ստուգման աշխատանքները շարունակվել են նոյեմբերի հինգին առավոտյան տասնեմեկից, որի ժամանակ արդեն հանձնաժողովն ամբողջական կազմով ուսումնասիրվել են առանձին բաղկացած խմբերի ստուգման արդյունքները, և կատարվել են համապատասխան շտկումներ: Աշխատանքները ստուգվել են հիմք ընդունելով նախօրոք մշակված պայմանական ճիշտ տարբերակների ձևաթուղթը: Ընդունվեց ի գիտություն, որ մինչև ստուգման աշխատանքների սկիզբը Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով իր անդամների առաջարկությունները, որոշակիորեն փոփոխել է ստուգման ձևաթուղթը և հնարավոր սխալների ցուցակը: Որոշվել էր խնդիրները ստուգել բացառապես հիմնվելով հանձնաժողովի կողմից հաստատված փոփոխված պայմանական ճիշտ տարբերակի վրա՝ այդ թվում նաև ստուգման գործընթացի հավասարությունը պահպանելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահը առաջարկվեց ամփոփել բոլոր աշխատանքները, և դրանք ներկայացնել դեկտեմբերի 1-ին, ինչից հետո հրապարակել արդյունքները՝ նշելով մասնակիցների անուն ազգանունը: Հանձնաժողովի անդամները ամփոփեցին աշխատանքները:

Օրակարգի երրորդ հարցի հետ կապված Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ համաձայն գործող կարգի, քննության մասնակիցները իրավունք ունեն բողոքարկել աշխատանքները՝ դրանք ստանլուց մեկ օրվա ընթացքում: Առաջարկվեց որպես քննության արդյունքների մասին ծանուցման օր հաշվել սույն արձանագրության՝ www.moj.am կայքում հրապարակման ամսաթիվը: Նաև առաջարկվեց, որ արձանագրությունը հրապարակելուց հետո էլ փոստի միջոցով արձանագրությունն ուղարկվի քննության մասնակիցներին: Առաջարկվեց արձանագրությունը հրապարակել ամենաուշը 2012 թ. նոյեմբերի վեցին, և հետևաբար բողոքները ընդունել մինչև 2012 թ. նոյեմբերի յոթը, ժամը 18:00 գրավոր եղանակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել նոտարների որակավորման ստուգումների խնդիրների փուլը անցած մասնակիցների ցանկը՝ ըստ հավելված 1-ի և հրապարակել այն ՀՀ արդարադատության նախարարության www.moj.am պաշտոնական կայքում:
ընդունվեց միաձայն
2. Հաստատել և հրապարակել պայմանական սխալների տարբերակը ըստ հավելված 2-ի:
ընդունվեց միաձայն
3. Դիմորդների էլեկտրոնային փոստի հասցեներով տեղեկացնել իրենց գնահատականների հրապարակման մասին:
ընդունվեց միաձայն
4. Ընդունել ի գիտություն, որ բողոքները կարող են բերվել գրավոր կամ էլեկտրոնային փոստի միջոցով մինչև 2012 թ. նոյեմբերի յոթը 18:00:

Արձանագրությունը կազմված է 16 էջից՝ կից 2 հավելվածներով:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ	
Անուն, Ազգանուն	Միավոր
Ալավերդյան Մանե	32
Ամիրխանյան Անուշ	48
Բեկյան Ռոզա	41
Բեջարյան Արմինե	85
Բզնունի Գագիկ	37
Գյուլնազարյան Գուրգեն	86
Գյուլումյան Մարգարիտա	45
Դադայան Լիլիթ	85
Դանիելյան Հեղինե	35
Դավթյան Արթուր Զանիբեկի	85
Եսայան Արմինե	41
Թորոսյան Հասմիկ	61
Խոցանյան Արմեն	41
Հակոբյան Անի	79
Հակոբյան Մանյա	87
Հովհաննիսյան Վահե	64
Հովսեփյան Լինա	85
Ղուկասյան Տաթև	64
Ղուչյան Ստելլա	42
Մակարյան Սամվել	44
Մադաթյան Արծրունի	86
Մայիլյան Վիկտորյա	38
Մանուկյան Աննա	43
Մանուկյան Արմեն	26
Մանուկյան Հասմիկ	35
Մելիքյան Գայանե	45
Մելքոնյան Արմինե	59
Մեսրոպյան Գայանե	41
Մուրադյան Լիլիթ	85
Նազարյան Աստղիկ	55
Շահբազյան Նառա	40
Պապինյան Ավետիք	42
Պողոսյան Նարեկ	55
Սադաթեյան Անահիտ	33
Սարգսյան Լուսինե	42
Սարգսյան Մարինե	86
Սարգսյան Տիգրան	85
Սարոյան Վարդուհի	70
Սիմոնյան Արման	27
Քամայան Նոննա	91
Քառյան Արփինե	21

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Խնդիր 1

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ամուսնության պետական գրանցման պահից /14-րդ կետ/ հակասում է Ընտանեկան օրենսգրքի 28 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությանը	1
2	Պայմանագրով սահմանափակվում է իրավունակությունը, իրավունքի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքը /12-րդ կետ/ հակասում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29 հոդվածի 3-րդ մասին	1
3	Անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ է նախատեսում պայմանագիրը /կետ 9/, միաժամանակ սահմանափակում է երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները /11-րդ կետ/ հակասում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29 հոդվածի 3-րդ մասին	1
4	Պայմանագիրը չի կարող կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները /8-րդ կետ/ հակասում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29 հոդվածի 3-րդ մասին	1
5	Նոտարական կարգով վավերացնող կամ հաստատվող փաստաթղթերի տեքստը չպետք է պարունակի հապավումներ, իսկ փաստաթղթի բովանդակությանը վերաբերող թվերը և ժամկետներն առաջին օգտագործման դեպքում առնվազն մեկ անգամ պետք է գրված լինեն բառերով /Պայմանագրի ներածական մաս/ Հակասում է Նոտարիատի մասին ՀՀ օրենքի 42 հոդվածի 2-րդ մասին	1
6	Աղջիկը չնայած հասել է ամուսնության տարիքին, սակայն մինչև ամուսնության պահը անչափահաս է, և հետևաբար պայմանագիր կարող է կնքել օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ:	1

Խնդիր 2

Սխալներ	Բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	<p>Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ, մինչդեռ լիազորագիրը տրված է, ոչ թե տնօրենի կողմից, այլ տնօրենների խորհրդի նախագահի կողմից, որը “ՄՊԸ-ների մասին” ՀՀ օրենքով նման լիազորություն չունի: Հակասում է ՀՀ քաղ. օր.ի 321 հոդվածի 5-րդ մասին, “ՄՊԸ-ների մասին” ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ մասի բ/ կետին:</p>	1
2	<p>Ներկայացուցչին տրված նվիրատվության կատարման լիազորագիրը, որում նշված չէ նվիրատուն և սահմանված չէ նվիրատվության առարկան, առոչինչ է: Լիազորագրում նշված է նվիրատվության առարկան, սակայն նշված չէ նվիրատուն: Հակասում է ՀՀ քաղ. օր. 599 հոդվածի 5-րդ մասին:</p>	10
3	<p>Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Մինչ դեռ, լիազորագիրը տրված է 38 ամիս ժամկետով: Հակասում է ՀՀ քաղ. օր.ի 322 հոդվածի 1-ին մասին</p>	1
4	<p>Վավերացման մակագրությունը սխալ է և դրված է ստորագրության իսկության վավերացման մակագրություն: Հակասում է ՀՀ նոտարիատի մասին օրենքի 67 հոդվածի առաջին մասին, ինչպես նաև չի համապատասխանում ՀՀ Արդարադատության նախարարի 04.03.2002թ-ի թիվ 113 հրամանով հաստատված համապատասխան մակագրության ձևին:</p>	10
5	<p>Լիազորողի ազգանունը երկու տեղ տարբեր է:</p>	1

Խնդիր 3

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է /"Կուսակցությունների մասին" ՀՀ օրենքի 23 հոդվածի 2-րդ մաս/	1
2	Նվիրաբերություններ կարող են արվել քաղաքացիներին, բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև պետությանն ու համայնքներին: մինչ դեռ նվիրաբերություն է նաև արվում մասնավոր առևտրային իրավաբանական անձին (որն ունի խանութ, և իրականացնում է ապրանքների մատակարարում):	1
3	Պայմանագրի 3.8 կետը հակասում է ՀՀ քաղ.օր 605 հոդվածի 2-րդ մասի պահանջների որի համաձայն Նվիրաբերությունն ընդունելու համար որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում:	1
4	Նոտարիատի մասին օրենքի 42 հոդվածի պահանջները	1

Խնդիր 4

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	Պայմանագրի 1-ին կետում խախտված է ՀՀ հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 7-րդ մասի այն պահանջը, ըստ որի Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով՝ սույն օրենսգրքի 76-80-րդ հոդվածներով սահմանված կարգով:	1
2	Պայմանագրում նշված չի կառուցապատման իրավունքի վճարի չափը, մինչդեռ ըստ ՀՀ հողային օրենսգրքի 81 հոդվածի 5-րդ մասի Հողամասի վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքի պայմանագիրը համարվում է չկնքված , եթե դրանում չեն սահմանվել ... վճարի չափը: Այսինքն պետք է սահմանված լինի որոշակի <i>վարձավճարի չափ</i> :	10
3	Պայմանագրի 2.1 և 2.2 կետերով խախտված են ՀՀ քաղ. օր 188 հոդվածի պահանջները որի համաձայն Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:	1
4	Պայմանագրի 2.3, 4.4 կետերը հակասում են ՀՀ քաղ. օր 204.1 հոդվածի 2-րդ մասի պահանջներին, ըստ որի Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: Այսինքն որևէ մեկի համաձայնությունը չի պահանջվում: Կառուցապատման իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի իրավահաջորդության կարգով:	1
5	Պայմանագրի 3.2 կետը հակասում է ՀՀ հողային օրենսգրքի 48.1 հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն Կառուցապատման իրավունքը տրամադրվում է պայմանագրով սահմանված ժամկետով և չի կարող գերազանցել 99 տարին, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ:	1
6	Հստակ չի Գյումրի համայնքի անունից ստորագրող անձի	1

	<p>լիազորությունների առկայությունը (այսինքն պետք է լինեն, Գյումրի քաղաքային համայնքը, ի դեմս քաղաքապետի, ում անունից լիազորագրի (լիազորագրի տվյալներ) հիման վրա հանդես է գալիս...:</p>	
--	--	--

Խնդիր 5

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	Պայմանագրի 2.2. կետը հակասում է 879 հոդվածի 1-ին մասին: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը եւ հաշվարկման կարգը, մինչ դեռ, պայմանագրում հաշվարկման կարգը սահմանված չէ: Բացի այդ Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:	1
2	Պայմանագրի 5.1. կետը հակասում է ՀՀ քաղօրի 877 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությանը, ըստ որի Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից, մինչ դեռ, կողմերը սահմանում են, որ պայմանագիրը համարվում է կնքված նոտարական վավերացման պահից:	1
3	Պայմանագրի 5.3. կետը հակասում է ՀՀ քաղօրի 882 հոդվածի 1-ին մասին, ըստ որի Փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:	1
4	Պայմանագրի 3.2.2. կետը հակասում է 884 հոդվածի 1-ին մասին, ըստ որի Եթե փոխառության պայմանագիրը կնքված է փոխառուի կողմից ստացված միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու պայմանով (նպատակային փոխառություն), փոխառուն պարտավոր է ապահովել փոխառության գումարի նպատակային օգտագործման նկատմամբ փոխատուի վերահսկողության հնարավորությունը:	1
5	Պայմանագրի առարկան հակասում է 877 հոդվածին (փոխառության առարկա չի կարող լինեն անհատական գույքը՝ միայն դրամ և տեսական հատկանիշներով որոշվող գույքը)	1

Խնդիր 6

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1.	Որպես պայմանագրի կողմ պետք է հանդես գա Երևան համայնքը, այլ ոչ թե Երևանի քաղաքապետը:	1
2.	Պայմանագրի նախաբանում «Հաս. և պետ. կարիք. համար սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան, անհրաժեշտ է ոչ թե ավագանու, այլ կառավարության որոշում:	1
3.	1. կետը հակասում է ՔՕ 566 հ., քանի որ չի սահմանված գույքը: 2. կետը հակասում է ՔՕ 566 հ., քանի որ չի սահմանված գույքը: Պայմանագրում այդ տվյալների բացակայության դեպքում հանձնման ենթակա անշարժ գույքի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ համապատասխան պայմանագիրը` չկնքված :	10
4.	7. կետը հակասում է ՔՕ 224 հ., քանի որ բազմաբնակարան շենքը և դրա տակ գտնվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է սեփականատերերին` ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով:	1

Խնդիր 7

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	<p>Պայմանագրի 1.1 կետը հակասում է ՀՀ քաղ. օր. 445 հոդվածի 3րդ մասին որի համաձայն Նախնական պայմանագիրը պետք է պարունակի պայմաններ, որոնք թույլ են տալիս սահմանել հիմնական պայմանագրի առարկան, ինչպես նաև մյուս էական պայմանները, ինչպես նաև ՀՀ քաղ. օր. 566 հոդվածին որի համաձայն Անշարժ գույքի վաճառքի պայմանագրում պետք է նշվեն տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս որոշակիորեն սահմանել գնորդին՝ պայմանագրով փոխանցման ենթակա անշարժ գույքը, ներառյալ՝ համապատասխան հողամասում կամ այլ անշարժ գույքի կազմում անշարժ գույքի դիրքը որոշող տվյալներ: Պայմանագրում այդ տվյալների բացակայության դեպքում հանձնման ենթակա անշարժ գույքի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ համապատասխան պայմանագիրը՝ չկնքված:</p>	10
2	<p>Պայմանագրի 3.1 կետը հակասում է ՀՀ քաղ. օր 445 հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որի համաձայն Նախնական պայմանագիրը պետք է պարունակի պայմաններ, որոնք թույլ են տալիս սահմանել հիմնական պայմանագրի առարկան, ինչպես նաև մյուս էական պայմանները: Իսկ ՀՀ քաղ. օր 567 հոդվածի համաձայն Անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը պետք է նախատեսի դրա գինը: Անշարժ գույքի վաճառքի պայմանագրում, կողմերի գրավոր համաձայնեցված գնի մասին պայմանի բացակայության դեպքում, դրա վաճառքի պայմանագիրը համարվում է չկնքված:</p>	10
3	<p>Պայմանագրի 5.3 կետը հակասում է ՀՀ քաղ. օր. 238 հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն գրավ դրված գույքը կտակելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է: Գրավ դրված գույքը կտակելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է:</p>	10

Խնդիր 8

Պայմանագրի կետը	Բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
3.1 կետը սխալ է:	Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է, այդ իրավունքի պետական գրանցման պահից: (ՀՀ Քաղ. Օր. Հոդված 10 մաս 2, Հոդված 135 մաս 1, Հոդված 176 մաս 2)	1
4.3. կետը սխալ է	հակասում է ՀՀ քաղօրի 368 հոդվածի 3-րդ մասին: ըստ այդ հոդվածի Հիմնական պարտավորության անվավերությունը հանգեցնում է այն ապահովող պարտավորության անվավերության: Մինչ դեռ, եթե փոխանակման պայմանագիրը անվավեր ճանաչվի, ապա այն ապահովող նախավճարի պայմանագիրը ինքնուրույն գործել չի կարող:	1
4.4. կետը սխալ է	հակասում է ՀՀ քաղօրի 430 հոդվածին և 306 հոդվածին: Ըստ այդ հոդվածի սահմանվել է, որ Պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ (նորացում): Մինչ դեռ իսառը պայմանագրի տարրի անվավեր ճանաչման դեպքում սկզբնական պարտավորությունը դադարում է և ձեռք է բերում գոյություն չունեցող պարտավորության կարգավիճակ: Բացի այդ տվյալ դեպքում նորացմամբ կկնքվի շինծու գործարք, ինչը ՀՀ քաղօրի 306 հոդվածի 2-րդ մասի համաձայն առոչինչ է:	1

Խնդիր 9

Սխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	Պետք է նկատի ունենալ, որ քանի որ ժառանգատուի բնակության վերջին վայրը Էջմիածին քաղաքն է, ուստի ժառանգությունը տրվելու է ոչ թե Կենտրոն այլ, Էջմիածին քաղաքի նոտարի կողմից:	1
2	<p>Ժառանգությունը բաժանվում է հետևյալ կերպ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. կինը ստանում է Էջմիածին քաղաքի Արցախի փող. 10 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի համասեփականատեր համարվող ամուսնու 1/4 բաժնի 1/3 մասը, այսինքն 1/12 բաժին, Երևանի Լենինգրադյան փող. 10 հասցեում գտնվող, ժառանգատուի կողմից մինչև ամուսնությունը ձեռք բերված ամբողջ բնակարանի 1/3 բաժինը և Մերսեդես մակնիշի ավտոմեքենայի 1/3 բաժինը: 2. Աղջիկը ստանում է Էջմիածին քաղ. Արցախի փող. 10 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի համասեփականտեր համարվող հոր 1/4 բաժնի 1/3 մասը՝ այսինքն՝ 1/12 բաժին, Երևանի Լենինգրադյան փող. 10 հասցեում գտնվող, ժառանգատուի կողմից մինչև ամուսնությունը ձեռք բերված ամբողջ բնակարանի 1/3 բաժինը և Մերսեդես մակնիշի ավտոմեքենայի 1/3 բաժինը: 3. Տղան ստանում է Էջմիածին քաղ. Արցախի փող. 10 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի համասեփականտեր համարվող հոր 1/4 բաժնի 1/3 մասը, այսինքն, 1/12 բաժին, Երևանի Լենինգրադյան փող. 10 հասցեում գտնվող, ժառանգատուի կողմից մինչև ամուսնությունը ձեռք բերված ամբողջ բակարանի 1/3 բաժինը և Մերսեդես մակնիշի ավտոմեքենայի 1/3 բաժինը: <p><i>Պարզաբանում՝</i> <i>Ժառանգատուի մայրը չի կարող ժառանգություն ստանալ, քանի որ բաց է թողել ՀՀ քաղ. օր 1227 հոդվածում նախատեսված ժառանգությունն ընդունելու 6-ամսյա</i></p>	10

Ժամկետը:

Ժառանգական գույքը բաժանվում է կնոջ, տղայի և աղջկա միջև, քանի որ որպես համասեփականատեր (և համատեղ բնակվող) վերջիններս համարվում են ժառանգությունն ընդունած, իսկ աղջիկը ավտոմեքենան փաստացի տիրապետելու ուժով նույնպես համարվում է ընդունած ժառանգ: Ըստ ՀՀ քաղ. օր. 1225 հոդվածի 3-րդ մասի Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Խնդիր 10

Մխալներ	բովանդակություն	սխալի տեսակարար կշիռ (միավոր)
1	<p>Պայմանագրի 1.1 կետը հակասում է ՀՀ քաղ. օր. 608 հոդվածի 3րդ մասին որի համաձայն Վարձակալության պայմանագրում պետք է նշվեն տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշակիորեն սահմանել այն գույքը, որը որպես վարձակալության օբյեկտ հանձնվում է վարձակալին:</p> <p>Պայմանագրում այդպիսի տվյալների բացակայության դեպքում վարձակալության օբյեկտի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ համապատասխան պայմանագիրը` չկնքված:</p>	10
2	<p>Պայմանագրի 4.3.3. կետը հակասում է ՀՀ քաղօրի 614 հոդվածի 1-ին մասին, ըստ որի Վարձատուն պատասխանատվություն է կրում վարձակալության հանձնված գույքի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունների համար, եթե նույնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին:</p> <p>Այդպիսի թերություններ հայտնաբերելիս վարձակալը, իր ընտրությամբ, իրավունք ունի`</p> <ol style="list-style-type: none"> 1) վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափորեն իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը. 2) վարձատուին նախապես տեղեկացնելով` վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը. 3) պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը: <p>Մինչ դեռ Վարձակալի ընտրությունը սահմանափակված է, իսկ այդպիսի ընտրությունը իմպերատիվ պահանջ է, այլ ոչ ղիսպոզիտիվ:</p>	1
3	<p>Պայմանագրի 7.6. կետը հակասում է 619 հոդվածի 1-ին մասին, ըստ որի Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար, եթե այլ բան նախատեսված չէ</p>	1

	<p>օրենքով: Տվյալ դեպքում պայմանագրով օրենքով նախատեսվածից բացի այլ պայման նման դեպքերում չի թույլատրվում սահմանել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կնախատեսի օրենքը:</p>	
--	--	--